# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 16.01.2014Թ. ԹԻՎ 15-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2014 թվականի մայիսի 19-ի դրությամբ 1422 փաստաբաններից լուսանկարվել են 555 փաստաբան,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանների մի մասը ցանկություն է հայտնել իրենց լուսանկարները տեղադրել կայքէջում,

արձանագրելով այն հանգամանքը, որ փաստաբանների համախմբվածության գաղափարից ելնելով ցանկալի (նախընտրելի) է միատեսակ լուսանկարներ տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև Պալատի 11.02.2012թ. կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝***

1. ***Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի** 16.01.**2014թ. թիվ** 15-**Լ որոշումը ուժը կորցրած ճանաչել:***
2. ***Հանձնարարել Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին՝ փաստաբանների կողմից ներկայացված լուսանկարները (բացառությամբ ազատ ոճի լուսանկարների) տեղադրել Պալատի կայքէջում:***
3. ***Սահմանել, որ փաստաբանների ցանկության դեպքում, Պալատը կազմակերպելու է նրանց լուսանկարումը:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

19 **մայիսի** 2014**թ**.
**թիվ** 173-**Լ**
**ք. Երևան**